

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.  
Ամենայն Հայոց Կաթողիկոս  
յ է ջ մ ի ա ծ ի ն.

39Ե

Բաց նամակ առ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ  
Կաթողիկոս Ամենայն Հայոց.  
ուղարկուած 6 Ապրիլ 2004  
374 1 517 301 Թ. 33 1 42 24 46

Բարիկ 6 Ապրիլ 2004

Վեհափառ Տէր.

Ներկայիս կը խնդրենք, որ բարեհաճիք միջամտել Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին մօտ, ի Նիւ Եօրք ԱՄՆ, որպէսզի Մեղքոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու իր որոշումը ջնջէ ան :

Կը սիրենք յուսալ չսխալիլ յայտարարելով թէ Հայոց անվիճելիօրէն խոշորագոյն Հաստատութիւններէն ՀԲԸՄ ը ամէն Հայու, եթէ ոչ սիրոյն, գէթ աւուուազն յարգանքին արժանի է. առ Հասարակ իր կատարած գործով ի նպաստ Հայկական Հաւաքականութիւններուն, ի Հայաստան եւ ի սփիւռս Աշխարհի : Այդուհանդերձ, ինչպէս յայտարարած է ՀԲԸՄ ի Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդը՝ «Ժամանակները փոխուած են» : Յիրաւի այդ փոխուող ժամանակներու ընթացքին, փոխուած են, նաեւ իրավիճակներ : Ու այդ փոփոխութիւններուն միջեւ են՝ այլեւ նկատի ունենալն ՀԲԸՄ ի Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին՝ որոշումներն ու գործունէութիւնը պարագայ առ պարագայ : Այս մերձեցումին հետեւանքով է, որ Հազարաւոր մարդիկ, ընդ որս ՀԲԸՄ ի բարերար անդամներ, Սուրբ Էջմիածնի բարերարներ, ամբողջ Սփիւռքի տարածքին. նաեւ ի Հայաստան կը շեշտեն, որ բոլոր Հայկական Հաւաքականութիւններուն Համար կործանարար անդրադարձ կ'ունենայ ՄԿՀ՞ն փակելու մասին ՀԲԸՄ ի Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին միաձայնութեամբ առած որոշումը :

Ի դէպ, նման պարագայի մը առաջեւ, ՀԲԸՄ ի գլխաւոր պատասխանատուն կը Հակարդարձէ յայտարարելով «Թող խօսին... կը յոգնին... եւ կը լռեն...» : Չերդ Վեհափառութեան ուշադրութեան կարելի է յանձնել թէ խօսողները երբ «յոգնին», դատական իշխանութիւններու հերթապահութիւնը կրնայ փոխարինել «յոգնած խօսողները» : Իսկ այդ հերթը ընդունակ է յոգնեցնելու «միաձայն» Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդը : Այս վերջոյն «յոգնութիւնը» միայն վնասակար կ'ըլլայ ՀԲԸՄ ին : Եւ հետեւաբար Համայն Հայոց ի սփիւռս աշխարհի, ընդ որս ի Հայաստան :

.../...

Վեհափառ Տեր. խոնարհաբար կը կարծենք, որ այժմ էս առաւել քան խաղաղ օրերու պարագային Չեզի կը վիճակի , որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, պաշտպանել ու պահպանել Հայոց Աշխարհի շահերը ու առ այդ՝ փրկել ՀԲԸՄ՝ նուաստացումէ եւ յիշեցնել կամ ի Հարկին բացատրել անոր ներկայ Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին թէ իրեն վստահուած Համահայկական երախտաշատ ՀԲԸՄ ին եւ անոր ժամանակաւոր ղեկավարներուն առաքելութեան մաս չի կազմեր որոշել Հայոց աշխարհացրիւ հաւաքականութիւններուն հայեցիութեան ճակատագիրը ու գործել ըստ այնմ, նուազ եւս արտօնուած են անոնք բնաջնջել հայեցի կրթութեան կառույցները, ինչպէս օտար ոյժեր ու անոնց ծառաները՝ նկրտած են ու այսօր ալ կը շարունակեն նկրտիլ՝ քայքայել ու քանդել Հայոց ինքնութեան ամենագոյնուն ակերը. յանուն կարգ մը շահերու եւ «ընկերափիլիսոփայական» մօտեցումներու կամ համակրութիւններու :

Վեհափառ Տեր. ոչ ոքի համար նորութիւն չէ ժամանակի ընթացքին ամէնուր իրավիճակներ կը փոխուին. նոյնիսկ երբեմն շատ արագօրէն : Կ'ըսեն՝ ժամանակները կը փոխուին, ինչպէս ՀԲԸՄ ի Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդի Նախագահը քանի մը օր առաջ Հայաստանի մէջ ալ կրկնեց զայս : Իրօք ա՛լ փոխուած են : Առ այդ՝ կը ինդրենք, որ հաճիք ընդունիլ կցեալ թուղթերը : Անոնք գաղափար մը կրնան տալ ի մասին յարակից փոփոխութիւններու, որոնք սակայն կը հակասեն ու կը հակադրուին Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու որոշումին :

Չերդ Սրբութիւնը, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, վստահաբար լաւագոյն եւ մանաւանդ Բարձրագոյն խօսակիցն է այդ որոշումը յայտարարող ՀԲԸՄ ի Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին : Ուստի կը ինդրենք, որ բարեհաճիք Չեր խաղաղարար միջամտութեամբ կարելի դարձնել Մելգոնեան Կրթական Հաստատութեան անձեռմխելջութիւնը, իր ամբողջական հողատարածքին վրայ որպէսզի ան վերագաւնայ հայեցի կրթութիւն ընծայող իր գերազանցիկ առաքելութեան՝ անվիճելիօրէն անհրաժեշտ՝ Հայոց Սփիւռքին եւ հետեւաբար Սուրբ Էջմիածնոյն եւ Հայաստանի :

Չերդ, Խորին Ակնածանօք  
յանուն ԿԻԹԱՍԷՐ -Pro Educatio'ի  
Vartan Ozinian

Բարիւր Աւագ Գշ.  
06 Ապրիլ 2004

Վ ա ռ դ ա ն Օ զ ի ն է ա ն  
Հեռագրատճէն 33 1 42 24 46 39

Կցեալ՝ վերոյիշեալ թուղթեր . 8 էջ

Ներկայ Բաց Նամակը կ' ուղարկուի նաեւ՝ լրատփուներու եւ առընչեալ Մարմիններու :

.../...